ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար բազմաֆունկցիոնալ սարքի՝ լազերայինի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-4 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունն և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ, ինչպես նաև առաջացել է Պայանագրով նախատեսված ապրանքների լրացուցիչ գնման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի 3-րդ կետը հաստատվել է նոր խմբագրությամբ, պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ում նշված <<մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:>> բառերը հանվել է պայմանագրից, պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատվել է նոր խմբագրությամբ:

Պայմանագրի 3.1 կետում նշված «7 729 680 (յոթ միլիոն յոթ հարյուր քսանիննը հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ» բառերը փոխարինվել է «8 502 648 (ութ միլիոն հինգ հարյուր երկու հազար վեց հարյուր քառասունութ) ՀՀ դրամ» բառերով, Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ապրանքի ընդհանուր քանակը սյունակում նշված «20» թիվը փոխարինվել է «22» թվով, ապրանքի ընդհանուր գինը/ՀՀ դրամ սյունակում նշված «7 729 680» թիվը փոխարինվել է «8 502 648» թվով, ապրանքի մատակարաման սյունակը լրացվել է նոր տողով, ինչպես նաև պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5, 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**